



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ.Ս.Խ.Հ.
ԱՌԺՈՂԿՈՄ ԱՏ

№ 2 ՍԵՆ-ԼՈՒԹ ԳՐԵԴԵՐԵՆ № 2

ԲԺ. Ա. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՏՐԱԽՈՄԱ.

2-րդ հրատարակում
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

617
—
Լ-33

1976 ՄԵՏՅՐԱՏ 3

— 3 ԵՐԵՎԱՆ —

30 JUL 2010
403

ՀՄԽՆ ԵՌԺՈՂԿՈՄԱՅ

№ 2 ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ № 2

517

-33

ԲԺ. Ս. ՆԱՎԱՍԱՆԲԳՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИЗДАТЕЛЬСТВА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՏՐԱԽՈՄԱ

ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ

1981—1982

ՊԵՏՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ
 ՊԱՏՎԵՐ № 22
 ԳՐԱՌԵՊԳԼԵՎԱՐ 2873 (Բ)
 ՏԻՐԱԺ 4000



60668-67

Տ Ր Ա Խ Ո Մ Ա

Աչքի հիվանդութիւնները թեև մահ չեն պատճառում, բայց շատ մարդկանց զբէում են ամենաթանկագին բանից՝ աչքի լուսից:

Աչքի հիվանդութիւնները շատ են և բաժանվում են վոչ վարակիչ և վարակիչ հիվանդութիւնների: Վարակիչ հիվանդութիւնները նրանք են, վորոնք հիվանդներից անցնում են առողջներին:

ՏՐԱԽՈՄԱՆ ՎԱՐԱԿԻՉ Ե. ՆԱ ԿՈՒ- ՐԱՑՆՈՒՄ Ե ՄԱՐԴՈՒՆ

Աչքի վարակիչ հիվանդութիւնների մեջ ամենից շատ տարածվածը և ամենախանգա՝ վորը արախոման է, վորովհետև նա յերկար տարիներ տանջում է մարդուն և վերջը նրա կուրութեան պատճառ է դառնում: Կուրութիւնն ամենամեծ զժրախտութիւնն է: Կույր մարդն ուրախութիւն չունի, նրա համար ցերեկն եւ մութ գիշերն է: Նա բավական չէ, վոր չի տեսնում, բավական չէ, վոր չի կարող աշխատել, այլ դեռ կարիք ունի, վոր նրա համար ուրիշն աշխատի, վորովհետև նա պիտի ուտի՝ խմի, հագնի, բնակարան և ինամոզ ունենա:

Կույր մարդը մի ծանր բեռ է թե ընտանիքի և թե հասարակութեան համար:

ԻՆՉՊԵՍ Ե ՍԿՍԼՈՒՄ ՅԵՎ ԶԱՐԳԱՆՈՒՄ ՏՐԱԽՈՍԱՆ ՏՐԱՆՈՄԱՆ ԿՈՊԵՐԻ ՀԻՎԱՆՂՈՒԹՅՈՒՆ Ե

Տրախոման կոպերի հիվանդութիւնն է: Առողջ կոպերը և նրանց յեզրին բուսնող արտահանուէրները պաշտպանում են աչքերը փոշուց, քրտնքից և դրսի վտանգներէց:

Յեթե առողջ մարդու կոպերը չըջնք, կտեսնենք, վոր հակառակ կողմը ծածկված է բարակ, բաց վարդագույն, կոկ և փայլուն թաղանթով: Այդ թաղանթը թաց է, վորովհետև նրա վրա բացվում են փոքրիկ խողովակներ ծակոտիներ, վորոնցից արցունք է դուրս գալիս և մշտապես լվանում աչքը:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Յերբ կոպերը վարակվում են տրախոմայով, այդ թաղանթը քիչ ուռչում է և ծածկվում փոքրիկ բշտիկներով, վորոնց թիվը գնալով շատանում է: Սկզբնական շրջանում մարդիկ սովորաբար խնամք չեն տանում և առուշադիր են, վոր կոպերի տակ ավազ կա, և աչքերն առավտաները թարախոտում են (ճարտոտում, կտուր տալիս):

Առհասարակ տրախոմայով հիվանդն այդ շրջանում բժշկի ոգնութեան չի դիմում, վորովհետև ցաւ չի դրում և կարծում է, վոր թեթև բան է, կանցնի ինքնիքէն: Հենց դրսւ-

նով ել տրախոման վտանգավոր է, վոր իր սկզբնական շրջանում աննկատելի յե մնում:

ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Սակայն հիվանդութիւնը դնալով սաստկանում է. բշտիկները շատանում են, և ապա նրանց մի մասն սկսում է պայթել և դառնալ փոքրիկ խոցեր:

Խոցերի տեղը մնում են սպիներ, մյուս կողմից ել նոր բշտիկներ են ավելանում: Սպիները և բշտիկները տրորելով՝ աչքը գրգռում են: Բիրը ծածկվում է դեղնամոխրագույն վարագույրով (թոզով), վորը տեսողութիւնը խանգարում է:

Այս շրջանում աչքերը լցվում են արյունով, սաստիկ արցունք է հոսում, և լույսին նայելը դժվարանում է:

Յեթե հիվանդը մի քանի օր իրեն հանդիստ է պահում, աչքի գրգռւն անցնում է, բակ անքնդութիւնից, ծիւից և փոշուց նորից կրկնվում է: Այդ դրութիւնը հիվանդի համար դառնում է սովորական բան, և այլևս շատերը չեն դիմում բժշկի ոգնութեան:

ՅԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Վերջապես դալիս է վերջին՝ Յ-րդ շրջանը, յերբ արդեն տեղ չի մնում նոր բշտիկների համար, և ամբողջ կոպի յետեւը ծածկված է լինում սպիներով, վորոնք ձգտում են կոպի յեզրը դեպի յեա, փոխում են արտա-

նունքների ուղղութիւնը, վերջիններս ել շա-
բունակ խփում ու տրորում են աչքը (մազա-
ծեծ անում), խոցեր են առաջ բերում հենց
այնտեղ, վորտեղ բիրն է յերևում: Մկալում
են սաստիկ ցավեր թե աչքում և թե գլխում.
հիվանդը գիշերները չի քնում, ցերեկն ուտե-
լիքից է զրկվում և յերկար տանջվում:

Թեև ցավերը հետագայում անցնում են,
բայց աչքի վրա մնում է բնդմիշտ զանազան
մեծութեան սպիտակ հատ: Հատերը, վորոնց
հասարակ լեզվով թող են կոչում, մասամբ
ծածկում են բիրը և մարդու տեսողութիւնը
խանդարում: Կոպերի վրա գոյացած սպինե-
րը, բացի աչք տրորելը, ծածկում են և ար-
ցունքի ծակոտիները. արցունքից զուրկ աչքը
չորանալուց կարող է նույնպէս կուրանալ:

ՏՐԱՆՈՄԱՆ ՅԵՐԿԱՐ Ե ԲԺՇԿՎՈՒՄ

Ամեն մի հիվանդութեան առաջն առնելը
հեշտ է, յերբ նա նոր է սկսվում: Տրախոման
չառ համառ հիվանդութիւնն է, և յեթե ժա-
մանակին չբժշկվես, նա տարիներ է քաշում և
հիմնովին չի բժշկվում: Դժբախտաբար մար-
դիկ դիմում են բժիշկներին շատ ուշ, 2-րդ և
ավելի հաճախ 3-րդ շրջանում, յերբ հիվան-
դութիւնն արդեն խորն արժատներ է գցել:

Սակայն չպետք է հուսահատվել. ճիշտ է,
հնացած տրախոման դժվար է բուժվում,
բայց յեթե բժշկին դիմես և նրա խորհուրդնե-
րով առաջնորդվես, աչքերդ կարող են փրկվել
և չկուրանալ:

ՉՊԵՏՔ Ե ԴԻՄԵԼ ՀԵՔԻՄՆԵՐԻՆ

Գյուղացին մասամբ բժշկական կենա-
բոններից հեռու լինելով (մանավանդ գյու-
ղական աշխատանքների ժամանակ), բայց
գլխավորապէս տգիտութիւնից, սովորու-
թիւնն ունի աչքը ցավելու դեպքում դիմել
հեքիմներին. դա շատ սխալ բան է, աչքի
լուսի հետ խաղալ չի կարելի. աչքի ցավը
հասկանալը և բժշկելը կարող է միմիայն բը-
ժիշկը, վորը յերկար ժամանակ ուսումնասի-
րել է այդ հիվանդութիւնը մասնագետների
մոտ:

Ինչպէս ասացինք, տրախոման խիստ վա-
րակիչ է. վարակը հիվանդից ատողջին է
փոխվում աչքի թարախի և արցունքի միջո-
ցով:

Որինակ՝ մեր գյուղացիները վատ սովոր-
ութիւնն ունեն. նրանք վրացվում են գյուղի
միջով անցնող աղտոտ առվի ջրով. նույնը
կատարում են նաև այն քաղաքներում, վոր-
տեղ ջրմուղ չկա: Յեթե տրախոմայով հի-
վանդի վրացվելուց հետո, միևնույն առվում,
բէշ ցած, վրացվի ատողը, նա կարող է առա-
ջինի աչքի թարախը ջրի միջոցով քսել իր աչ-
քերին և վարակվել:

Ա.Զ.ԲԻ ԹԱՐԱԽԸ, ՅԵՎ ԱՐՑՈՒՆԲԸ ՎԱՐԱԿԻԶ ԵՆ

Շատ հաճախ է պատահում, վոր տրախո-
մա ունեցող անգրագետ մայրը վրացվելուց

հետո, միևնույն շորով, հաճախ գողնոցով, սրբում ե իր առողջ յերեխաների աչքերն ու վարակում:

Վարակը գյուլությամբ կարող ե փոխանցվել միատեղ, մի անկողնում քնելիս, վորովհետև բարձին կարող են քավել հիվանդի աչքի թարախն ու արցունքները: Հիվանդները հաճախ ձեռք են տալիս իրենց աչքերին. նրանք կարող են վարակել ուրիշներին բարեվելով ու միևնույն գործիքները գործածելով, որինակ՝ արհեստանոցում, դպրոցներում...

ՏՐԱԽՈՄԱՆ ԱՂԲԱՏՆԵՐԻ ՅԵՎ ԱՆԳՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Ե

Քանի մարդիկ խիտ ապրեն, այնքան նրբանց շփումը մեծ կլինի. հետևապես տրախոմայի վարակը կարող ե մասսայական բնույթ ստանալ հանրակացարաններում, յեթե առողջապահական կանոններին խստորեն չհետևվեն: Ծուխը և բնակարանի ծանր ուղը նույնպես նպաստում են տրախոմայի տարածման, վորովհետև նրանք գրգռելով հիվանդի աչքերը՝ շատացնում են թարախն ու արցունքը: Տրախոմայով հիվանդի ներկայությունն ազելի վտանգավոր ե ընտանիքներում. ուստի այն գյուղերում, վորտեղ թոնիրը, կենդանիները և մարդիկ մի սենյակում են լինում, տրախոման շատ ե տարածված: Դրա համար էլ զարմանալի չե, վոր տրախոման ազդատ-

ների և անգրագետների հիվանդություն ե համարվում:

Յերեան քաղաքում, վորտեղ բնակչությունը կուլտուրապես ավելի բարձր ե և քիչ թե շատ մաքուր ե սպրում, տրախոման համեմատաբար քիչ ե տարածված: 1924-25 թվի դպրոցների հետազոտման հիման վրա տրախոմայով հիվանդների թիվը Յերեանում կազմում եր ընդամենը 5,5 տոկոս:

Ենեգավիթ գյուղում, վոր քաղաքին մոտ ե և արդեն բնակարանները զոմերից բաժանված են—8 տոկ. (1926 թ.):

Արտաշատ գյուղում արդեն՝ 17 տոկ., իսկ Եփրազու (Դավալուի շրջան)՝ 25 տոկ.:

ԿՈՒԼՏՈՒՐԱՊԵՍ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՏՐԱԽՈՄԱՆ ՎԵՐՁԱՑՅԵԼ Ե

Նկատված ե, վոր նյութապես ապահով և կրթված ընտանիքներում տրախոման հազվագյուտ ե, կամ բոլորովին չի պատահում, վորովհետև նրանք գիտեն, վոր մաքուր ապրելով կարող են իրենց պաշտպանել վարակիչ հիվանդություններից:

Կան այնպիսի յերկրներ, վորոնք, շնորհիվ իրենց բարձր կուլտուրայի և ձեռք առած միջոցների, բոլորովին ազատվել են տրախոմայից. որինակ՝ Անգլիան, Ֆրանսիան և Ամերիկան: Հայտնի յե, վոր Միացյալ Նահանգները վոչ մի տրախոմայով հիվանդի չեն թողնում մտնել իրենց յերկիրը և կես ճանապարհից յետ են դարձնում:

Այժմ մեր պետական օրգաններն ևս ջանք չեն խնայում բարձրացնելու մեր յերկրի առողջապահական և սանիտարական գործը: Երկայումս մեզանում պրոֆիլակտիկ աշխատանքները մեծ մղում են ստացել աշխատավոր մասսաների մեջ. նրանց նպատակն է պարզել աշխատավորութան առաջ իր թշնամիներին, վորովհետև պայքարը դյուրին է դառնում, յերբ գիտես, թե ի՞նչ հիվանդություն է տրախտման, ինչպես է զարգանում և տարածվում նա:

**Ի՞նչ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ ՏՐԱԽՈՄԱՅՈՎ
ԶՎԱՐԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

1. Ունենալ մաքուր ու լուսավոր բնակարան:
2. Սպիտակեղենը, անկողինը և հագուստը շուտ-շուտ փոխել և լվանալ:
3. Շուտ-շուտ լվանալ ձեռները սապոնով, մանավանդ ուրիշի գործիքներին և իրերին ձեռք տալուց հետո:
4. Անլվա ձեռքով աչքերին ձեռք չտալ:
5. Լվացվելու համար գործածել աղբյուրի, հորի կամ քարով անցկացրած առվի ջուր:
6. Ունենալ առանձին սրբիչ:
7. Ընտանիքում մեկն ու մեկի աչքերը կարմրելիս կամ ցավելիս՝ առանց հետաձգելու, դիմել բժշկին:
8. Տրախտմանի դեպքում խնամքով բժշկվել և միաժամանակ նախազգուշացնել բնտանիքի մյուս անդամներին:


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տրախտման վարակիչ է. նա կուրացնում է մարդուն	3
2. Տրախտման կոպերի հիվանդություն է	4
3. Առաջին շրջան	4
4. Յերկրորդ շրջան	5
5. Յերրորդ շրջան	5
6. Տրախտման յերկար է բժշկվում	6
7. Զպետք է դիմել հեղիմներին	7
8. Աչքի թարախը և արցունքը վարակիչ են	7
9. Տրախտման աղքատների և անզրազեաների հիվանդություն է	8
10. Կուլտուրական ավելի բարձր յերկրներում տրախտման վերջացել է	9
11. Ի՞նչ պետք է անել տրախտմանով չվարակվելու համար	10

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ
ԵՐԿՐԱՆՈՒԹՅԱՆ
ՀՄՈՒՄԱՆԱԿԱՆ
ՍՏՈՒԹՅԱՆ ԿՆՎԱԿՆ





« Ազգային գրադարան



NL0285774

7748

39-K
A 402



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Д- В. И. с р д н Академии Наук
СССР

Т р а х о м а "

Госиздат ССР Армении
Э р и в а н ь

1931